ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 278

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Գորիս համայնքի Գորիս քաղաքի գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

| ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաք Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 09-003-0331 կադաստրային ծածկագրով 50.0 հա ընդհանուր մակերեսով (42.38532 հա վարելահող, 7.61468 հա արոտավայր) գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր և 09-003-0097-0001 կադաստրային ծածկագրով 1.60014 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք | 09-003-0331 կադաստրային ծածկագրով 50.0 հա ընդհանուր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների գյուղատնտեսական արտադրական օբյեկտների և 09-003-0097-0001 կադաստրային ծածկագրով 1.60014 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր |

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:
2. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից ներկայացված պայմանը (կցվում է):
3. ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Գորիս քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Գորիս քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե. Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ. Դավթյան |

Երևան, « 3 » «հուլիսի» 2024թ.